բոնք յարմար և պիտանի են իրենց համար։ Մի անգամ (1880-ական թուականներին) Միրզա-բէկլու Թրքահօս Հայադաւան գիւղացի յայտնի հարուստ և բարեգործ գիւղական դատաւոր (սու-դիա) Սահակ Սադինեանը (տողերիս գրողի հարա-զատ մօր քեռին) մի քանի ուրիշ պատուաւոր գիւղացիների հետ՝ եկել և իջևանել էին ինձ մօտ հիւր։ Ծննդեան տօնի օրը Զրօրհնեաց շքեղ հան-դէսը անցնինք և խոր տպաւորութիւն էր արել իմ պարզամիտ բրիստոնեայ հիւրերիս սրտի, հո-գու և բոլոր զգայմանց վրայ։ Երեկոյեան, անօրհ-նէքից յոգնած ու դպրած երբ հասայ տուն, ար-տասուքն աչքերին մօտենալով ինձ քեռիս, յու-զուած շեշտերով սկսեց խօսել այսպէս։—«Ի՞նչ օղ-լի ախպէր ջան, բուգիւն վանքատայ, Ի՞րէրուն ի-չինայ խաչ սուվայ սալանդայ նեալեմք գնօրդիմ. նախշի խաչվառլար, չօխ բահալի շուրջառլար, իշիմ իշիմ իշխդիան գնօզալ բուռվառլար։ Էլա բի-լասանքի, անամդան բուգիւն գօղդում, Թեազա-դեան էրմանի օլդում։ Ջան ախպէր, սարախ ած-գնահան օլմրսան, գնալ գեղախ, բիր նախշի խաչ-վառ ալախ բիզիմ քլիսադան իչուն»։ Այսինքն՝ «քրոջորդի ախպէր ջան, այսօր վանքում (Թիֆլի-զի վանաց աւագ եկեղեցում) Կուր գեաի մէջ խաչը ջուր ձգելիս ինչեր տեսայ.—լաւ խաչ-վառներ, թանկագին շուրջառներ, ցոլցլուն, վայ-լուն և գեղեցիկ բուռվառներ։ Այնպէս իմացիր, որ կարծես մէկ մօրիցս այսօր ծնայ, նորից Հայ դարձայ։ Տէրտէր ջան, վաղն ազատ կլինիմ, ա-րի գնանք մէկ լաւ խաչվառ առնենք մեր (գիւ-